ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԵՎ ՄԵԹՈԴԻ ՄԱՍԻՆ

Մ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ստ. Շահումյանը պրոլետարիատի գործնական-քաղաքական խնդիրները սերտորեն կապում էր դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի և մարքսիստական քաղաքատնտեսության հարցերի հետ։ Տնտեսական ու քաղաքական ամեն մի պրոբլեմ լուսաբանելիս նա դիալեկտիկական մատերիալիզմի դրույթները տարածում էր հասարակական երևույթների վրա։ Շահումյանը ելնում էր պատմության մատերիալիստական ըմբռնումից, ըստ որի «պատմական սկզբնական, այսպես ասած շարժիչ ֆակտորը տնտեսական ֆակտորն է։ Մնացած բոլոր, այսպես կոչված, իդեոլոգիական ֆակտորները— կրոնը, մորալը, գիտությունը, իրավունքը—երկրորդային կամ ածանցիկ ֆակտորներ են»[1]։

Շահումյանը գտնում էր, որ հասարակության զարգացման գլխավոր գործոնը նյութական բարիքների արտադրությունն է։ «Վ. Փափազյանը պատմագետի գերում» հոդվածում քննադատելով ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը միայն արտաքին երևույթներով և աշխարհագրական միջավայրով բացատրող պատմաբաններին, Շահումյանը նշում էր, որ պատմության ընթացքը որոշողը ժողովրդի տնտեսական գործոնն է, տնտեսական կյանքը[2]։ *«Մարդկության պատմությունը,— գրում էր նա Վերներ Զոմբարտի «Սոցիալիզմը և սոցիալական շարժումները 19-րդ դարում» աշխատության կոնսպեկտում,— պայքար է կամ մեկ բաժին ընկնող սննդամթերքի կամ հողի տեղի համար, որտեղ այդ մթերքներն ստացվում են»*[3]։

Նյութական բարիքների արտադրման, իրենց գոյության պահպանման համար մարդիկ մտնում են բնության հետ փոխգործողության մեջ, որը որոշակի հասարակական ձև ունի։ Դա աշխատանքի պրոցեսն է։ Շահումյանը գտնում էր, որ աշխատանքը մարդու բացառիկ նվաճումն է, գիտակից, նպատակասլաց գործունեությունը։ Աշխատանքի միջոցով իրենց կարիքների բավարարման համար մարդիկ վերափոխում են արտաքին բնության առարկաները։ Ազդելով բնության վրա, նրանք միաժամանակ ազդում են իրենց վրա, զարգացնում աշխատանքի իրենց ընդունակությունները, հարստացնում բնության երևույթների և նրանց օգտագործման մասին իրենց գիտելիքները։

Մարդու աշխատանքի համար հարկավոր են որոշակի պայմաններ՝ աշխատանքի առարկա, արտադրության միջոցներ և մարդկային կենդանի աշխատանք։ Դրանք պայմանավորված են մեկը մյուսով։ Մարդիկ աշխատանքի առարկայի վրա ազդում են ոչ թե մերկ ձեռքերով, այլ արտադրության միջոց-

---

1 *Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, 1955, Հայպետհրատ, էջ 97։*

2 *Նույն տեղում, հ. 2, էջ 215։*

3 *ՍՄԿԿ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, գ. 10։*

ներով ու գործիքներով։ Բնության հետ նրանց «պայքարի գլխավոր միջոցը աշխատանքի այն գործիքներն ու բնության այն ուժերն են, որ մարդիկ օգտագործում են իրենց արտադրողական գործունեության մեջ, այն է՝ երկրագործական և այլ գործիքները, ամեն տեսակի մեքենաները, կրակի, ջրի, շոգու, էլեկտրականության ուժը և այլն»[4]։

Ստ. Շահումյանի աշխատություններում բազմաթիվ մտքեր կան բնության և հասարակության զարգացման օրենքների մասին։ Ինչպես բնության, նշում էր նա, այնպես էլ հասարակության օրենքներն ունեն օբյեկտիվ բնույթ, գործում են մարդու կամքից ու ցանկություններից անկախ։ Սակայն այդ հասկացողությունները չպետք է շփոթել միմյանց հետ։ Շահումյանը քննադատում էր բոլոր նրանց, ովքեր բնության օրենքները «հախուռն, ուղղագիծ կերպով բիոլոգիայի բնագավառից» փորձում էին տեղափոխել «սոցիոլոգիայի բնագավառը»։ Ականավոր մարքսիստը հանգել էր այն եզրակացության, որ մարդկանց աշխատանքային նպատակները իրենց հիմքով օբյեկտիվ են և պայմանավորված են բնությունով։ Սակայն նյութական բարիքներ արտադրելու ընթացքում մարդիկ աստիճանաբար տիրապետում են բնության օրենքներին և նրանց ստիպում ծառայել իրենց նպատակներին։ Օբյեկտիվ են և մարդկանց կամքից ու գիտակցությունից անկախ են գործում նաև հասարակության զարգացման օրենքները։ Այդ օրենքները հաշվի չառնելը մարդկանց չի կարող հասցնել ցանկալի արդյունքների։ Ֆրանսիական հեղափոխության առաջնորդները, օրինակ, հաշվի չառնելով իրական պայմանները, հռչակել էին «ազատություն», «հավասարություն» և «եղբայրություն»։ Սակայն պարզվեց, որ այդ հեղափոխությունը «կարող էր իրականացնել միայն «ազատություն»,— այն էլ առանձին տեսակի ազատություն,— ազատություն բուրժուական շահագործման համար։ Պարզվեց, որ ֆեոդալական հասարակության ընդերքում կարող էր հասունանալ միայն բուրժուական հասարակությունը»[5]։

Այդ կապակցությամբ Շահումյանը բերում է նաև Փարիզյան կոմունայի օրինակը։ Կոմունան «ցանկանում էր ստիպել եվրոպական հասարակությանը գործելու սոցիալիստականորեն։ Բայց պարզվեց, որ տնտեսական զարգացման այն աստիճանին, հասարակության արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների այն վիճակի օրով սոցիալիստական հեղափոխությունն անհնարին է»[6]։

Հասարակության զարգացման օրենքներից Շահումյանը առանձնակի ուշադրություն էր դարձնում արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքին։ Ելնելով Կ. Մարքսի «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» աշխատության հանրահայտ առաջաբանի հարցադրումներից, նա գրում էր, որ արտադրության միջոցները և մարդկանց աշխատուժը, այսինքն՝ նրանց աշխատելու ընդունակությունը, կազմում են հասարակության արտադրողական ուժերը։ Իսկ «հասարակության արտադրողական այդ ուժերն օգտագործելիս մարդիկ մտնում են իրար հետ որոշ հարաբերությունների, այսպես կոչված, հասարակական կամ արտադրական հարաբերությունների մեջ։ Դեպի բնությունն ու մեկը մյուսի նկատմամբ

4 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 97։
5 Նույն տեղում, էջ 102։
6 Նույն տեղում, էջ 102—103։

եղած մարդկանց այդ փաստական հարաբերությունների հողի վրա ստեղծվում է այդ հարաբերությունների որոշ ըմբռնումը»[7]։

Դիալեկտիկական միասնության մեջ լինելով հանդերձ, արտադրողական ուժերը և արտադրական հարաբերությունները անընդհատ փոփոխվում ու զարգանում են։ Ընդ որում, այդ փոփոխությունները միշտ սկսվում են արտադրողական ուժերից և, ամենից առաջ, աշխատանքի գործիքներից։ Ենթարկված լինելով գոյության կռվի անողոք օրենքին, մարդիկ միշտ և ամենուրեք, կամա թե ակամա զարգացնում են իրենց արտադրողական ուժերը։ Դրան համապատասխան, փոփոխության են ենթարկվում նաև արտադրական հարաբերությունները։ Այդ նույն պատճառով փոփոխություններ են տեղի ունենում նաև հասարակական գիտակցության մեջ, ծագում են նոր գաղափարներ, իրավական և կրոնական նոր նորմաներ։ Ահա թե ինչու պատմության շարժիչը հասարակության արտադրողական ուժերն ու արտադրական հարաբերություններն են, «այլ խոսքով ասած՝ հասարակության տնտեսական ստրուկտուրան կամ տնտեսական ֆակտորը»[8]։

Բավական չէ ընդունել տնտեսական գործոնի, կամ, Մարքսի խոսքերով ասած՝ հասարակական կեցության առաջնությունը և հասարակական գիտակցության հետ նրա միասնությունը։ Շահումյանն այդ միասնությունը դիտում էր անընդհատ փոփոխման ու զարգացման, պատմական որոշակիության մեջ։ Նա գտնում էր, որ հասարակության զարգացման յուրաքանչյուր աստիճանում կեցությունն ու գիտակցությունը հանդես են գալիս տվյալ ժամանակաշրջանին համապատասխան բովանդակությամբ և առանձնահատուկ օրինաչափություններով։

Շահումյանը նշում էր, որ ապրելու համար մարդիկ հանդես են բերում դանաղան նախաձեռնություն, նույնիսկ չգիտակցելով, թե այն ինչ հետևանք կունենա հասարակության համար։ Մինչդեռ այդ աննկատելի փոփոխությունները նախապատրաստում են արտադրական նոր հարաբերություններ։ Այդ առիթով Շահումյանն անդրադառնում է քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների անցման օրենքին։ Քննադատելով Է. Բեռնշտեյնին և Վ. Զոմբարտին, որոնք պնդում էին, թե կապիտալիզմից սոցիալիզմին անցնելը քանակական փոփոխությունների, կապիտալիզմի մեջ սոցիալիզմի տարրերի աճման պարզ պրոցես է, նա նշում է, որ սոցիալիստական հեղափոխությունը բխում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների անհամապատասխանությունից։ Իրենց կենսական շահերի պաշտպան տիրապետող դասակարգերը երբեք կամավոր չեն դիջի իշխանությունը։ Ուստի, նոր, առաջադիմական դասակարգերին անհրաժեշտ է լինում հասարակության տարերային, աստիճանական զարգացումը փոխարինել անխուսափելի հեղափոխություններով։ Իսկ հեղափոխություններն «ավարտում են հասարակության էվոլյուցիոն զարգացման որոշ ցիկլը և ճանապարհ են հարթում նրա հետագա՝ էվոլյուցիոն զարգացման համար»[9]։

Իհարկե, հասարակության տնտեսական զարգացման ամեն փոփոխություն չի կարող դառնալ հեղափոխական պայթման պատճառ։ Վ. Ի. Լենինը

---

7 Նույն տեղում, էջ 97—98։

8 Նույն տեղում, էջ 98։

9 Նույն տեղում, էջ 100։

նշում էր, որ հեղափոխությունն սկսելու համար հարկավոր է հեղափոխական իրադրություն։ Բայց այդ էլ քիչ է, ավելացնում էր նա։ Ամեն մի հեղափոխական իրադրություն չէ, որ ծնում է հեղափոխություն։ Հեղափոխությունը տեղի չի ունենա, քանի դեռ հին արտադրաեղանակի արտադրողական ուժերը իրենց զարգացմամբ բավականաչափ առաջ չեն անցել արտադրական հարաբերություններից և դասակարգային հակասությունները չեն հասել ծայրահեղ սրության։ Միշտ էլ անհաջողությամբ են վերջանում հեղափոխական բոլոր այնպիսի փորձերը, «երբ որոշ գործողության համար հասունացած հասարակության վրին ցանկանում են փաթաթել ֆունկցիաներ, որոնք նա կատարել չի կարող. այնպիսի ֆունկցիաներ, որոնք հատուկ են հասարակությանն այլ՝ նրա նյութական ուժերի, նրա «օրգաններիի» զարգացման ավելի բարձր աստիճանում»[10]։

Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հետ սերտորեն կապված, Շահումյանը քննարկում է հասարակության բազիսի և վերնաշենքի հարցերը։ Բազիսը նա բնութագրում է որպես հասարակության նյութական արտադրական ուժերի զարգացման որոշակի աստիճանին համապատասխանող արտադրական հարաբերությունների ամբողջություն, իսկ վերնաշենքը՝ հասարակության քաղաքական, կրոնական, գեղարվեստական, փիլիսոփայական հայացքներ և դրանց համապատասխանող քաղաքական, իրավական և այլ հիմնարկներ։ «Հասարակության տնտեսական ստրուկտուրան այն բազիսն է,— գրում է Շահումյանը,— որի վրա կառուցվում են իդեոլոգիական «վերնաշենքերը»[11]։ Եթե բազիսը հասարակությանը ծառայում է տնտեսապես, ապա վերնաշենքը՝ գաղափարապես։

Յուրաքանչյուր բազիս ունենում է իրեն համապատասխանող վերնաշենք։ Միշտ էլ վերնաշենքը հանդիսանում է դասակարգային տիրապետության կազմակերպություն։ Այն ծագում է հասարակական տվյալ կացութաձևի տնտեսական բազիսից և կախման մեջ է գտնվում նրանից։ Բազիսի փոխվելուց անմիջապես հետո, փոխվում է նաև նրան համապատասխանող վերնաշենքը։

Աճելով որոշակի տնտեսական բազիսից, վերնաշենքը, այնուամենայնիվ, պասսիվ չէ։ Նա իր հերթին ազդում է հասարակության զարգացման վրա։ Ավելին, կապիտալիստական բազիսի ընդերքում զարգանում են պրոլետարական վերնաշենքի տարրեր, որոնք հակասության մեջ են մտնում տիրապետող կապիտալիստական հասարակարգի վերնաշենքի հետ։

Վերլուծելով Ռուսաստանի և Անդրկովկասի տնտեսական-քաղաքական-վիճակը, Շահումյանը ցույց էր տալիս բազիսի և վերնաշենքի միջև եղած հակասությունները։ Նա գտնում էր, որ բազիսին համապատասխան պետք է փոխել նաև պետական կառավարման ձևը՝ քաղաքական հին վերնաշենքը։ Իսկ դրա համար ռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանում արդեն կային անհրաժեշտ նախադրյալներ։ Մնում էր միայն սուբյեկտիվ գործոնի ըստ ամենայնի օգտագործումը՝ դեմոկրատական ուժերի կազմակերպված գործողությունը՝ քաղաքական իշխանության համար հեղափոխական կուսակցության ակտիվ ղեկավար դերով։

---

10 Նույն տեղում, էջ 102։

11 Նույն տեղում, էջ 98։

Ականավոր մարքսիստ-լենինյանը այդպիսի եզրակացության էր հանգել իր հեղափոխական գործունեության դեռևս առաջին տարիներին։ Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտից, որպես պատգամավոր, մասնակցելով հեղափոխական ուսանողության Համառուսաստանյան առաջին համագումարին, իր ճառերից մեկում, ինչպես հիշում է հին բոլշևիկ Արշավիր Մելիքյանը, նա ասում էր. «Մինչև չխորտակվի քաղաքական գլխավոր խոչընդոտը՝ ցարիզմը», բոլոր տեսակի վառ ձգտումներն անիրագործելի են[12]։ Կամ 1902 թ. մայիսին գրած՝ Ղազարոս Աղայանի հոբելյանին նվիրված ճառի տեքստում նա ընդգծում էր քաղաքական-հեղափոխական կռվի անհրաժեշտությունը բռնակալության դեմ։ Նույն թվականի հոկտեմբերին, հայ սոցիալ-դեմոկրատների միության «Մանիֆեստում», որ Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում[13], Շահումյանն արդեն խնդիր էր դնում արմատապես հեղաշրջել տիրող անարդար կարգերը։

Այնուհետև, 1906 թ., Շահումյանն այդ միտքը զարգացրեց «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» աշխատության մեջ, որտեղ, ելնելով մեծ ուսուցիչ Մարքսի ուսմունքից, նշում էր, որ առանց կապիտալիստական արդյունաբերության վերացման ազգային հարցի արմատական լուծումն անհնարին է։

Ստ. Շահումյանը տարբեր առիթներով շոշափել է նաև քաղաքատնտեսության մեթոդի հարցը։ Քաղաքատնտեսության մեթոդը դիալեկտիկական մատերիալիզմն է, որը հնարավորություն է տալիս հասարակական արտադրության երևույթները դիտել համընդհանուր կապի և փոխադարձ պայմանավորվածության մեջ, դրանց մոտենալ կոնկրետ-պատմականորեն և ոչ թե հավիտենական ու անփոփոխ ճշմարտության դիրքերից։

Ղեկավարվելով դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդով, նկատում էր Շահումյանը, ինչպես գիտության մյուս ճյուղերը, այնպես էլ քաղաքատնտեսությունը միաժամանակ ունի իր առարկայի բնույթին համապատասխան հետազոտության սեփական մեթոդը՝ աբստրակցիան, որը հենվում է բնության որակական երևույթների՝ քանակական հարաբերությունների և հասարակական արտադրության պրոցեսների իմացության վրա։ «Տնտեսական ձևերը վերլուծելիս,—սովորեցնում է Մարքսը,—ոչ մանրադիտակից կարելի է օգտվել, ոչ էլ քիմիական ռեակտիվներից։ Երկուսին էլ պետք է աբստրակցիայի ուժը փոխարինի»[14]։

Ա. Չուպրովի «Քաղաքատնտեսություն» գրքի մասին իր կոնսպեկտում Շահումյանը ընդգծել է, որ քաղաքատնտեսությունը գեղուկտիվ գիտություն է։ Ինչպես հասարակական մյուս գիտություններում, այնպես էլ քաղաքատնտեսության մեջ փաստերի էմպիրիկ կուտակումը չի կարող հանգեցնել ճիշտ գիտելիքների. «Մաքուր փորձնական մեթոդը կիրառելի չէ սոցիալական գիտությունների նկատմամբ, այլ խոսքերով, ինդուկտիվ եղանակներն իրենց մաքուր ձևով հասարակական հարցերում կիրառելի չեն, այնպես որ այն պատճառները, որոնցից կախված են սոցիալական կյանքի երևույթները, ա) բազմաթիվ են, բ) մեծ մասամբ գործում են ճաստաեղ, այնպես որ հնարավոր չի լինում մեկի գործողությունը առանձնացնել մյուսների գործողություններից, գ) հա-

---

12 «Նոր աշխարհ», 1922, № 2, էջ 159։
13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 441։
14 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 4։

սարակական գործոններից յուրաքանչյուրը ենթակա է մշտական փոփոխություններին»[15]:

Տնտեսական դեդուկցիան, նշում էր Շահումյանը, կարող է տալ հայտնի ուժի միայն միտումը, ցույց տալ այն ուղղությունը, որով այդ ուժը ձգտում է գործել: Բայց չի կարելի հավաստիացած լինել, թե կյանքում միշտ այդ ուժի արտահայտմանը մենք կհանդիպենք նրա ամբողջ նախասկզբնական մաքրությամբ: Այդ պատճառով Շահումյանը գտնում է, որ հասարակական կյանքի երևույթներն ուսումնասիրելիս հարկավոր է միացնել ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները՝ առանձնահատուկ նշանակություն տալով գիտական աբստրակցիային: Ընդ որում, «աբստրակցիայի միջոցով ընդհանուր եզրակացությունների նկատմամբ ձեռք բերված հավատը հիմնավոր է միայն այն ժամանակ, երբ, մանրակրկիտ համեմատելով իրականության հետ, պարզվում է, որ այդ եզրակացությունները համապատասխան են ուղղակի դիտման արդյունքներին»[16]:

Տնտեսագիտական հետազոտության աբստրակցիոն մեթոդը ամենագիտական մեթոդն է: Այդ մեթոդի շնորհիվ հնարավոր է լինում խորը և լրիվ հետազոտել հասարակական արտադրության և նյութական բարիքների բաշխման օրենքները: Զուգակցվելով կոնկրետ տնտեսական նյութին, ռեալ իրականությանը, աբստրակցիոն մեթոդը հնարավորություն է տալիս կատարել փաստերի խորն ընդհանրացում, բացատրել այդ փաստերի էությունը, ցույց տալ դրանց զարգացման օրինաչափությունները:

Սոցիալ-նացիոնալիստների հայացքները մերկացնելու առիթով Շահումյանը պատմական զուգահեռ է անցկացնում բուրժուական կլասիկ քաղաքատնտեսության և գոեհիկ քաղաքատնտեսության մեթոդների միջև: Ինչպես հայտնի է, կապիտալիստական արտադրաեղանակի ծագման սկզբնական շրջանում ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարում նոր զարգացող բուրժուազիայի դերը առաջադիմական էր, որի գիտական հիմնավորման համար հարկավոր էր համապատասխան գաղափարախոսություն: Եվ ահա ծագեց բուրժուական գիտական կամ կլասիկ քաղաքատնտեսությունը: Նրա հիմնադիրները՝ Վիլյամ Պետտին, Ադամ Սմիթը և Դավիդ Ռիկարդոն էլ սկիզբ դրեցին կապիտալիստական արտադրաեղանակի գիտական հետազոտությանը: Կապիտալիզմի վերընթաց զծով զարգացման ժամանակաշրջանում նրանք պնդում էին, նշում է Շահումյանը, թե կապիտալիստական «հասարակարգը մարդկային «բնությանը» հարազատ և «հավիտենական» տնտեսական-հասարակական կարգն է»[17]:

Կապիտալիզմի հետագա զարգացման ընթացքում երևան եկան ու խորացան նրա հակասությունները: Պրոլետարիատի դասակարգային պայքարը ահեղ սպառնալիք դարձավ կապիտալիստական հասարակարգի գոյության համար: Այդպիսի պայմաններում բուրժուազիան այլևս առաջադիմական դասակարգ լինել չէր կարող: Ուստի, բուրժուական կլասիկ քաղաքատնտեսությունը իր տեղը զիջեց գոեհիկ տնտեսագիտությանը: Վերջինիս ներկայացուցիչները, ինչպես Շահումյանն է նրանց անվանում՝ «եվրոպական և ռուսական համալսարանները լցնող տնտեսագիտության պրոֆեսորները», դառնում են կապիտալիզմի երդվյալ պաշտպաններ ու սպասավորներ:

---

15 ՍՄԿԿ ԿԿ-կից ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, գ. 10:

16 Նույն տեղում:

17 Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն, Երկեր, հ. 2, էջ 295:

Իր կոնսպեկտներից մեկում Շահումյանն անդրադառնում է առավել ցայտուն հակագիտական բուրժուական դոգմիկ քաղաքատնտեսության «Պատմական դպրոցին», որի գլխավոր տեսաբաններն էին բուրժուական դոգմիկ տնտեսագետներ Վ. Ռոշերը, Բ. Հիլդեբրանդտը և Շմոլլերը։

Մարքսիզմը նորանոր դիրքեր էր նվաճում։ Իսկ այդ ավելի էր գազազեցնում բուրժուազիայի վարձկաններին։ Նրանք նոր մեթոդներ էին որոնում գիտական կոմունիզմի ուսմունքի դեմ պայքարելու, կապիտալիզմը պաշտպանելու, բանվորական շարժումը դադարեցնելու համար։ «Պատմական դպրոցին» հաջորդած «Նոր պատմական դպրոցը» ավելի ռեակցիոն դուրս եկավ։ Նրա հիմնադիր Գուստավ Շմոլլերին չէին բավարարում նույնիսկ Ռոշերի և Հիլդերբրանդտի հետադիմական հայացքները։ Շմոլլերը պնդում էր, թե դասակարգերը ոչ թե պատմական կատեգորիա են, այլ մշտական, հավիտենական երևույթներ, որ «տերը և ստրուկը տարբեր են իրենց բնությամբ, ինչպես հոգին և մարմինը»[18]։

Բաժանելով Վ. Ի. Լենինի մտքերը, Շահումյանը նշում էր, որ մարքսիստական ուսմունքի հաղթանակները ստիպում են նրա թշնամիներին մարքսիզմի դիմակ հագնել։ Բուրժուական տնտեսագետներից շատերն առերես ընդունում են դիտական կոմունիզմի ուսմունքը, բայց դուրս հանում նրա հեղափոխական ոգին։ Այդպիսիներից մեկը Գ. Շմոլլերի աշակերտ Վ. Զոմբարտն էր։ Վերջինս, իհարկե, բացեիբաց չէր խոստովանում, թե ինքը թշնամի է հեղափոխական սոցիալիզմին։ Ընդհակառակը, նա նույնիսկ փորձում էր կոկետություն անել Մարքսին. «Եվ հատկապես այն բանի համար,— գրում է Զոմբարտը,— որ Մարքսը կապիտալիզմի առաջ դրել է մեծ խնդիր՝ ծնել այն, ինչի ձգտում էր Մարքսը, նա հոգու խորքում սիրում էր կապիտալիզմը. հարկավոր է ամբողջ սրությամբ ընդգծել այն փաստը, որ կապիտալիստական աշխարհի գոյություն ունեցող բոլոր դծերի նկատմամբ Մարքսը հանդես էր բերում դրական վերաբերմունք։ Մի՞թե նա կարող էր, արտահայտվելով իր սեփական համեմատությամբ, արհամարհել և ատել այն մորը, որն իր արգանդում կրում է բուռն կերպով սպասվող երեխային՝ նոր, լավ աշխարհը»[19]։

Կարլ Մարքսի ուսմունքը Զոմբարտը մեկնաբանում էր բուրժուազիայի համար ոչ վտանգավոր, էվոլյուցիոն-ռեֆորմիստական ձևով։

Հենց Զոմբարտին և բուրժուազիային հավատարիմ ու նվիրված մյուս տնտեսագետներին, նույն թվում հայ բուրժուազիայի գաղափարախոսներին՝ դաշնակցականներին ու սպեցիֆիկներին է ակնարկում Շահումյանը, երբ գրում է, որ այժմ նրանք չեն ասում «թե կապիտալիզմը «հավիտենական» հաստատություն է։ Նրանք հավատացնում են միայն, որ նա (կապիտալիզմը) գեռ շատ կենսունակ է, որ նա ունի շատ «բարեմասնություններ» (ականջը խոսի՞ Դ. Անանունի...), որ նա «տևական» բնավորություն ունի։ Բայց այստեղից ի՞նչ գործնական եզրակացություն են անում այդ գիտնականները։ Այն՝ որ վայել է իրենց, որպես բուրժուազիայի վարձկաններին։ Որովհետև կապիտալիզմը գեռ գոյություն ունի և զուրկ չէ «բարեմասնություններից», ապա ուրեմն հարկավոր է, նրանց կարծիքով, կռվել պատմության հեղաշրջիչ ուժերի դեմ, հարկավոր է ամեն կերպ ճնշել բանվոր դասակարգի ձգտումը դեպի նոր հասարակարգը,

---

[18] Г. Шмоллер, Народное хозяйство, наука о народном хозяйстве и ее методы, 1902, стр. 160

[19] В. Зомбарт, Современный капитализм, т. 3, полутом 1, стр. 26. М.—Л., 1930.

զրկել, օրինակ, բանվորներին ընտրողական իրավունքից, կոալիցիայի իրավունքից և այլն։ Մի խոսքով՝ անել ամեն բան, որպեսզի որքան կարելի է երկարատև և—ա՜խ, երանի՜ թե հնարավոր էր եղել այդ—հավիտենական լինի կապիտալիզմի գոյությունը։ Համաձայնեցեք, որ բուրժուազիան տեղիք չունի գժգոհելու իր գիտնականներից»[20]։

Կես դարից էլ ավելի է անցել, երբ Ստ. Շահումյանը գրել է այդ խոսքերը։ Այդ ժամանակաշրջանում հասարակության կյանքում տեղի են ունեցել համաշխարհային պատմական մի շարք խոշորագույն իրադարձություններ։ Եվ չնայած այդ փոփոխություններին, բուրժուական տնտեսագետների շահումյանական բնութագիրը լրիվ չափով վերաբերում է նաև ժամանակակից բուրժուական քաղաքատնտեսությանը։ Այժմ էլ, ինչպես և առաջ, բուրժուական քաղաքատնտեսությունը շարունակում է կապիտալիզմը համարել հասարակական կազմակերպության ամենակատարյալ սիստեմը։

Սակայն համաշխարհային պատմության զարգացման «ռեալ փաստերը ջարդուփշուր են անում այսպես կոչված, «ժողովրդական կապիտալիզմի», «ընդհանուր բարգավաճության պետության» վերաբերյալ խաբեբայական առասպելները, որոնք տարածվում են բուրժուական գաղափարախոսների կողմից»[21],— ասված է ՍՄԿԿ XXIII համագումարին տված ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ։

СТЕПАН ШАУМЯН О ПРЕДМЕТЕ И МЕТОДЕ ПОЛИТЭКОНОМИИ

М. А. ГРИГОРЯН

Резюме

Степан Шаумян занимался рассмотрением вопросов предмета и метода политэкономии в армянской марксистской экономической литературе. В его трудах и конспектах по этому вопросу имеются многочисленные оригинальные высказывания.

В статье показывается, что Шаумян еще в конце 19 и в начале 20 вв., исходя из экономического учения К. Маркса, дал правильное решение вопросов предмета политической экономии, основы общественной жизни, производительных сил и производственных отношений, базиса и надстройки и др.

Анализируя индуктивный и дедуктивный методы, Шаумян защищал марксистское учение о том, что, руководствуясь методом диалектического материализма, политэкономия одновременно имеет свой собственный метод исследования—метод абстракции.

В статье говорится о том, что как в прошлом, так и в настоящее время апологеты буржуазии ищут новые методы для защиты интересов монополистического капитализма.

---

20 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 295—296։

21 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՍՄԿԿ XXIII համագումարին, Երևան, 1966, էջ 17։